ՀՏԴ 891.981:371.31

ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ/ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ/

Գրետա Հակոբյան
մ.գ.թ., դոցենտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայաստան

Անոտացիա

Հոդվածում դիտարկված են համամոլորակային էկոլոգիական ահագնացող ճգնաժամի արդի ժամանակաշրջանում գրական ստեղծագործություններում արծարծված կենսահաստատ գաղափարների միջոցով դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորման հարցեր: Բնութագրված է «էկոլոգիական գիտակցություն» հասկացությունը մարդ-բնություն-հասարակություն կայուն հավասարակշռության պահպանման և ներդաշնակ համագոյակցության համատեքստում: Սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորման տեսանկյունից վերլուծված ենք մուշներ հայ բանաստեղծ Համո Սահյանի պոեզիայից:

Բանալի բառեր՝ *էկոլոգիական գիտակցություն, կենսաէթիկա, շրջակա միջավայր, էկոլոգիական փիլիսոփայություն, Համո Սահյանի պոեզիա:*

Կենսագործունեության ընթացքում մարդը մշտապես վերափոխում է իրեն շրջապատող բնությունը, խախտում բնության օրենքները, որոնք իրենց հերթին հանգեցնում են մարդ-բնություն համակեցության խաթարման՝ սպառնալիքի տակ դնելով ապագա սերունդների կենսագործունեությունը, էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների առջև կանգնեցնելով համայն մարդկությանը և մռայլ դարձնելով ապագայի տեսլականը: Արդյունքում խախտվում է մարդու պահանջմունքների ու բնական ռեսուրսների համաչափության սկզբունքը: Հողի, օդի ու ջրի աղտոտումը, գլոբալ տաքացումը հանգեցնումեն կործանիչ տարերքների՝ սպառնալով մոլորակի էկոհամակարգերի բնականոն կենսագործունեությանը: Մոլորակի կենսահամակարգերին սպառնացող վտանգների չեզոքացումն ու կենսաբազմազանության ամբողջ ականության ապահովումը՝ որպես համամարդկային կամքի դրսևորում, դառնում են կեցության արժեքային գերակայություն:

Օրեցօր աճում է մարդկության հավաքական պատասխանատվությունը մոլորակի ճակատագրի հանդեպ՝ մեծացնելով նաև գիտակցված պատասխանատվության անհրաժեշտությունը յուրաքանչյուր անհատի մակարդակով: Մարդածին գործոնների հետևանքներն առավել ավերիչ կլինեն, եթե մարդկությունը չսթափվի, չվերաիմաստավորի մարդ-բնություն համակեցության փիլիսոփայությունը և որպես հավերժական արժեք չընկալի բնությունը, որից էլ կախված է համայն մարդկության բարօրությունը:

Այդ խնդրի լուծման հրամայականը թելադրում է մարդու *էկոլոգիական գիտակցության* ձևավորում, որը կրթական համակարգերի գերակա խնդիր է դառնում՝ այն առաջնահերթությունների գիտակցմամբ, որ յուրաքանչյուր դպրոցական ընկալի, պատկերացնի

էկոլոգիական հիմնախնդիրները, դրսևորի համարժեք վարք և ծավալի բնության օրենքներին ու օրինաչափություններին ներդաշնակ, մարդ-բնություն հավասարակշռության պահպանմանն ի նպաստգործունեություն:

Գիտակցությունն օբյեկտիվ աշխարհի արտացոլումն է, մարդու պրակտիկ գործունեության անհրաժեշտ կողմը: Այն զարգանում է մարդու՝ իրականության հետ փոխազդեցության գործընթացում, նրա առարկայական գործունեության, հասարակական-պատմական փորձի հիման վրա: «Գիտակցությունն օբյեկտիվ իրականության արտացոլման բարձրագույն, միայն մարդուն հատուկ ձև է, այնպիսի հոգեկան գործընթացների համակցություն, որոնք ակտիվորեն մասնակցում են մարդու կողմից օբյեկտիվ իրականության և իր սեփական կեցության իմաստավորմանը»[5, էջ 88-89]: Ա.Վ. Պետրովսկին գրում է. «Գիտակցության բնորոշ գիծը հենց իրեն՝ գիտակցության մեջ ամրակայված սուբյեկտ և օբյեկտ զանազանել կարողանալն է, այն բանը կարողանալ տարբերակելը, թե ինչն է պատկանում իրեն՝ մարդու «ես»-ին, և ինչը՝ «ոչ ես»-ին [1, էջ 351]:Այսինքն՝գիտակցական մակարդակում մարդն իմաստավորում է բնության կապերն ու հարաբերությունները և իրտեղն ու դերն այդ համակարգում:

Էկոլոգիական գիտակցությունը շրջակա միջավայրի նկատմամբ մարդու հայացքների, համապարփակ զգացումների, այդ համակարգում իր համակողմանի հարաբերությունների, կեցության սկզբունքների ամբողջությունն է, որն արտահայտվում է այդ միջավայրում գոյատևման միջոցների և ներդաշնակ համակեցության խելամիտ ընտրության մեջ, և որը պայմանավորում է մարդու ճանաչողական ու պրակտիկ գործունեությունը: Էկոլոգիական գիտակցությունը համայն մարդկության կենսամիջավայրի պահպանման անհրաժեշտության խոր գիտակցումն է՝ արտացոլված բնության նկատմամբ մարդու գործնական հարաբերություններում և արժեքային կողմնորոշումներում: Դա աշխարհի ամբողջական, համապարփակ ընկալումն է՝ այդ համակարգում յուրաքանչյուր բաղադրիչի գոյության, համագոյակցության, համազարգացման ու կայուն հավասարակշռության պահպանման օրենքների անխախտելիության վերաբերյալ խորապես գիտակցված և իմաստավորված համոզմունքներով: Էկոլոգիական գիտակցություն ունենալ նշանակում է գիտակցել մարդու գոյության միջավայրի պահպանության անհրաժեշտությունը ճանաչողական, հուզական և վարքային մակարդակներում: Այսպիսով՝ էկոլոգիական գիտակցությունը ձևավորվում է շրջապատող աշխարհի ներդաշնակության՝ որպես բացարձակ արժեք ընկալման արդյունքումմարդու՝ամբողջական գիտելիքների համակարգի տիրապետմամբ և դրսևորվում հայացքների, համոզմունքների, դատողությունների ու գործողությունների ձևով: Ի վերջո բնությունն ընկալվում է իբրև բարձրագույն արժեք, այդ աշխարհում անձի տեղի ու դերի իմաստավորման և գիտակցված գործունեության երաշխիք ու նախապայման:

Բնապաշտությունն ու բնահարմարության սկզբունքն ընկածեն էթնիկ մշակույթների և դաստիարակչական համակարգերի հիմքում: Գ. Ն. Վոլկովը նշում է, որբնությունը մեծ, հզոր մակրոտիեզերք է, մարդը՝ միկրոտիեզերք. այստեղից էլ բխում է դաստիարակության բարձրագույն, հիմնական սկզբունքը՝ բնահարմարությունը. այն, ինչ համապատասխանում է բնությանը, բարիք է, իսկ ինչ հակասում է նրա զարգացմանը՝ չարիք[6, էջ 132]:

Ա. Նալչաջյանը գրում է.«Բնության վրամշակութային-հողեղեն շերտ է բարձրանում, որից հետո այդ բարդ բնամշակութային համալիրը ներգործում է անձի ձևավորման և էթնոգենեզի ընթացքի վրա: Յուրաքանչյուր անհատ դեռևսվաղ մանկության տարիներին նախնական տպավորություններ (իմպրիտինգ) է ունենում բնության պատկերներից, որի հետևանքով նրա և

տեղանքի, նրա և տեղանքի առանձին առարկաների միջ և հուզականկապեր են առաջանում: Ահա թե ինչու հայրենիքից հեռու գտնվելով՝ մարդիկ թախծում ու կարոտում են ոչ թե պարզապես իրենց երկրի հողին, ջրին ու լեռներին, այլ հայրենիքի հոգեբանականացված, շնչավորված պատկերին»[2, էջ 42]:

Էկոլոգիական գիտակցությանը սերտորեն առնչվում են կենսաէթիկայի գաղափարները: էկոլոգիական փիլիսոփայության, էկոլոգիական կենսաէթիկայի ոլորտում են արժևորվում բնական և հասարակական միջավայրերում առկա այնպիսի հիմնախնդիրներ, որոնք կարողեն լուծվել մարդու պատասխանատվության զգացման, մարդ-բնություն-հասարակություն ներդաշնակ միասնության հաստատմանճանապարհով:

Կրթական գործընթացում էկոլոգիական գիտակցության ձևավորման ներգործուն միջոցներ են ուսումնական առարկաների բովանդակությունը, ուսուցման մեթոդներն ու ձևերը, ուսուցչի մասնագիտական կարողությունները, միջավայրային այլևայլ գործոններ:

Մարդու և բնության փիլիսոփայության, ներդաշնակության բացառիկ զգացողությամբ է տոգորված հայ բանաստեղծ Համո Սահյանի պոեզիան, որը դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորման ազդու միջոց է: Այն կարելի է կիրառել ոչ միայնհայ գրականության դասաժամի ընձեռած հնարավորությունների սահմաններում, այլև հարակից առարկաների դասերին, դասղեկի ժամերին, արտադասարանային թեմատիկ միջոցառումների, էքսկուրսիաների, էկոլոգիական բովանդակությամբ զրույցների, բանավեճերի ընթացքում:

Բնությունը՝ որպես բանաստեղծական ներշնչանքի հզոր աղբյուր, հրաշալիորեն արտացոլված է «Արտույտներ» բանաստեղծության մեջ.

...Բայց տեսել ենք, որ չունեմ ես ոչ մի երգ առանց ձեզ,
Եվ իմ ամեն տեղի տակ թռվռում եք դուք անտես:
Հաճախ ինչ-որ առիթով և հաճախ էլ անառիթ
Բախվում եք ձեր թևերով երգիս ամեն մի բառին:
Ինչի մասին էլ գրեմ և ինչպես էլ գրեմ ես,
Ինչքան էլ ձեզ չկանչեմ և չհիշեմ անգամ ձեզ,
Ո մի հնար չի լինում, մեր դաշտերից լայն ու պերճ
Գալիս եք ու թռիչքով մտնում եք իմ երգի մեջ [3, էջ 24-25]:

Բնությունը ոչ միայն նյութակա նբարիքների, այլ և բարոյական նորմերի ու սկզբունքների աղբյուր է: Եթե մարդը ներդաշնակ է բնության օրենքներին, նա անսպառ ոգևորություն,ներշնչանքէ ստանում բնությունից, նրանից վերցնում կատարյալ ձևեր, թեմաներ, գաղափարներ, հույզեր, տպավորություններ.

Ինչի՞ց է, որ չի սպառվում
Երգի քո պաշարը,-
Լոկ նա գիտե այս աշխարհում-
Աղոթարան սարը[4, էջ 110]:

Խոր ներհայեցողությամբ բանաստեղծը բանաձևում,խտացնում է իմաստության հզոր ակունքի գաղափարը. *մարդուն զորացնողը, ներշնչողը, շտկողը, դաստիարակողը, մաքրագործողը, հավերժացնողը, պահպանողը, շարունակողը, վերականգնողը, բալասանողը,ուժ ու իմաստնություն պարգևողը բնությունն է՝ իր կենսատու հզորությամբ ու ժամանակ չճանաչող հավերժությամբ.*

...Ինձ հազար տեղից ծռել են մարդիկ,
Կաղնուդ բնի պես շտկիր ինձ, անտառ:

Տար, որպես ճյուղից ընկած մի կաղին,
Բացատիդ եզրին տնկիր ինձ, անտառ [4, էջ 284]:

Էկոլոգիական գիտակցության խոր զգացողությամբ է գրված «Պտուղդ քաղող չկա» բանաստեղծությունը: Սամի յուրահատուկ դրամա է, մարդու և բնության՝ միմյանցից օտարման ցավագին ճիչ, տագնապ, ահազանգ: Բարձր քարափների վրա ամեն տարի պտղում է մասրենին, սակայննրա պտուղը քաղող չկա, քարափները դատարկ են, մարդ չկա. մասրենու «երեսին նայող չկա»: Մասրենին բնության բողոքի խտացված արտահայտությունն է, վաղվա տխուր, անհեռանկար տեսլականը. կրքերի կրակը կայրի, հետո կհանգչի, մասրենին այլևս պտուղ չի տա, կխռովի, և մարդը կզրկվի բնության պարգևից՝ մասրենու հմայքից, հրեղեն քնքշանքից, արարման հրաշքից, պտղաբերման աստվածընծա խորհրդից.

Երեսիդնայողչկա,
Մասրենի,վայրիմասրենի,
Կրքերիդկրակըքեզ
Թողայդպես այրի,մասրենի...
Կանգնել եսքո բարձունքին,
Մեկուսի,մենակ,մենավոր...
Իմերեսառած դարում
Դու լքվածայրի,մասրենի[4, էջ 116]:

Ցավից հառաչում է բանաստեղծը.ամեն գարուն բնությունը զարթոնք է ապրում, խելահեղ, անսանձ, փոթորկուն տարերքի, չքնաղ գեղեցկության, հավքերի սիրարբած երգերի, լուսեղեն թրթիռների մեջ իրենց ունկնդիր, իրենցով հիացողեն փնտրում բնության շնչավոր ու անշունչ զավակները, փնտրում ու չեն գտնում.

Ծաղկունքի հեղեղ է փրփրում
Անտառի աչքերի առաջ:
Կարոտած ականջ է փնտրում
Զարթոնքի հողոտ մի հառաչ:
Երկնքի մի շերտէ թրթռում՝
Քարափի ափի մեջ կանաչ:
Կարոտած ականջ է փնտրում
Ջրվեժի ճերմակ մի շառաչ... [4, էջ 126]:

Էկոլոգիական գիտակցության խտացված արտահայտություն է «Քնել չեմ կարող» բանաստեղծությունը՝ տոգորված մարդ-բնություն կապի խախտման կորստի ցավով: Գեղանկարչական արվեստի բացառիկ դրսևորման ու բնության շնչավորման անմեկնելի զգացողությամբ պատկերված է բարդին՝ հայոց բնապատկերի անզուգական խորհրդանիշը: Դատարկվող տների առջև տխրում են բարդիները, մերկանում իրենց հագուստից՝ շքեղ տերևներից, «վիզը ծուռ»՝ ցերեկն իրենց տխրությունն են լալիս, գիշերը՝ մրսում մենակությունից, անհուսությունից, դատարկությունից, մարդու բացակայությունից: Հումանիզմի այս բացառիկ դրսևորումը վերածվում է *էկոհումանիզմի*,տարածվում է բնության վրա և բաբախում տիեզերական սիրով.

Աշուն է եկել: Տանը մարդ չկա:
Մարդահոտ չկա: Դուռը չի բացվում,
Բարդին մենակ է մնացել բակում,
Իմ նարմանազուկ, վիզը ծուռ բարդին:

...Դուք նրա ցավերն զգու՞մ եք, թե չէ,
Նա էլ սիրտ ունի, նա էլ մարդ է, չէ՞:
Ո՞վ պիտի նրան հաց ու ջուր անի,
Եվ ո՞վ պիտի գա ու փոխարինի[4, էջ 235]:

Բանաստեղծության վերջին տողերը հնչում են իբրև դատավճիռ. մենակությունից, մարդու կարոտից խռովեն, կչորանան բարդիները, նրանց փոխարինող չի լինի, կամայանա բնությունը, և կխախտվեն բնության օրենքներն ու օրինաչափությունները:

Մարդու և բնության ներդաշնակության բացառիկ նմուշ է «Պապը» բանաստեղծությունը. մարդն ու բնությունն անխախտ միասնություն են, մարդը բնության մի մասնիկն է. բնույթով «արարող ու ավերիչ»՝ նա ամբողջ կյանքում բնության հետ համակեցության անխախտ միասնությանմեջ է և ծրագիր ու սկզբունք ունի՝ «ամպի հետ արտասվել, հողի հետ խոսել», «խառնվել այն հողին, որ իրեն սնել է»: Փիլիսոփայորեն վերաիմաստավորվում է կյանքի և մահվան, գոյիմաստի հավերժական հարցադրումը: Թեմայի շարունակությունն է «Քարափներ, իմ քարափներ» բանաստեղծությունը՝ որպես բնության հավերժության և մարդ-բնության՝ժամանակ ու տարածություն չճանաչող կապի փիլիսոփայական հզոր ընդհանրացում.

Ձեզ ժամանակն է դարբնել,
Դուք մնացեք, քարափներ,
Ես գնացող եմ...
Բայց գնալուց հետո էլ,
Երբ որ կանչեք, կարթնանամ,
Ձեր ոտքերի տակ՝ մի բուռ
Խոր քնած հող եմ[4, էջ 98]:

Մարդն ու բնությունը միաձույլ են, մարդը բնության մի մասնիկն է, և գոյի հոլովույթում՝ հոգևոր-բարոյական որոնումների խաչուղիներում,բանաստեղծը սահմանում է համակարգային մտածողության և էկոլոգիական գիտակցության հավերժ անխախտ բանաձևը: Մարդ-բնություն ներդաշնակության անդուլ որոնումներում փոխվում է մարդու ֆիզիկական մահվան ըմբռնումը. *բնության հավերժության մեջ ամփոփված են նաև մարդու անմահությունը, սերունդների կենսագրությունը՝ որպես նոր եկող սերունդների հոգևոր հենարան և հավերժական կենսատարածք:*

Գրականությունը մարդու հոգու վրա ներգործելու հզոր հնարավորություններ ունի, որոնց հմուտ կիրառմամբ կարելի արդյունավետ իրականացնել դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ընդհանուր հոգեբանություն (պրոֆ. Ա.Վ. Պետրովսկու խմբագրությամբ), -Եր.: Լույս, 1974, - 543 էջ:
2. ՆալչաջյանԱ. Ա. Էթնիկականմանկավարժություն, -Եր.: Զանգակ-97, 2003. -312 էջ:
3. Սահյան Հ. Ս., Երկերի ժողովածու: 2 հատորով. - Հ. 1, - Եր.:Սովետական գրող, 1984. -392 էջ:
4. Սահյան Հ. Ս., Երկերի ժողովածու: 2 հատորով.-Հ. 2. -Եր.:Սովետականգրող, 1984. -440 էջ:
5. Փիլիսոփայական բառարան (Մ.Մ. Ռոզենտալի խմբ.), - Եր.: Հայաստան, 1975, -467 էջ:
6. Волков Г. Н. Этнопедагогика / Г. Н. Волков. - М. : Академия, 1999.-168с.

РЕЗЮМЕ

Роль литературных произведений в формировании экологического сознания школьников /на примере поэзии Амо Сагияна/

Грета Акобян

Ключевые слова: экологическое сознание, биоэтика, окружающая среда, экологическая философия, поэзия Амо Сагияна.

В статье рассмотрены вопросы формирования экологического сознания школьников посредством литературных произведении. Характеризовано понятие «экологическое сознание» в контексте взаимодействия человек-природа-общество. С точки зрения формирования экологического сознания учащихся анализированы образцы поэзии знаменитого армянского поэта Амо Сагияна.

SUMMARY

The Role of Literary Works in the Development of Schoolchildren's Ecological Conscience (based on Hamo Sahyan's poetry)

Greta Hakobyan

Keywords: ecological conscience, ethics of life, environment, ecological philosophy, Hamo Sahyan's poetry.

The article touches upon the formation of ecological conscience of school students by means of literary works. The construct of *ecological conscience* has been defined in the context of the humanity – nature – society interaction. Excerptsfrom the renowned Armenian poet Hamo Sahyan's poems have been analysed from the perspective of their potential in shaping learners' ecological conscience.